



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИМЕНИ В. БРЮСОВА  
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ  
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ  
В. БРЮСОВА  
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

---

**ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ**

**LINGUISTICS AND PHILOLOGY**

**1 (58)**

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ - 2021**

**ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՆՈՐԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ  
ԳՈՐԾԱՔԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ «ՀԱՐՐԻ  
ՓՈԹԵՐԸ և ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՔԱՐԸ» ՎԵՊԻ ՀԱՅԵՐԵՆ  
ԹԱՐԳՄԱՆՎԱԾՔՈՒՄ**

**ԱՆՆԱ ՇԱՀՐԱԶՅԱՆ**

*Հիմնաբառեր՝ հեղինակային նորաբանություն, ֆենթրզի ժանր, թարգմանության մեթոդներ, թարգմանության ընթացակարգեր, գործաբանական արժեք*

«Հարրի Փոթերը» վիպաշարում, ինչպես բնորոշ է ֆենթրզի ժանրին պատկանող ստեղծագործություններին, հեղինակային նորաբանությունները նշանակման գործառույթից բացի իրականացնում են մեկ այլ գործառույթ, այն է՝ ընթերցողին փոխանցել հեղինակի հաղորդագրությունն ու մտադրությունը, վերջինիս մոտ ստեղծել հենց այն ճշգրիտ պատկերացումները, որոնք մտադիր է եղել հաղորդել հեղինակը: Հեղինակային հորինվածքների այս գործաբանական ներուժի պահպանումը ու փոխանցումը իսկական մարտահրավեր են թարգմանչի համար: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպից վերհանված հեղինակային նորաբանություն տեղանունների բառաստեղծման, իմաստային և գործաբանական առանձնահատկությունները, ինչպես նաև դիտարկել, թե թարգմանական ինչ մեթոդի կամ ընթացակարգի միջոցով են վերջիններս փոխանցվել հայերեն և թե որքանով է տվյալ միջոցի կիրառումը նպաստել այս միավորների գործաբանական արժեքի պահպանմանը թիրախ լեզվում: Հետազոտությունից պարզ է դառնում, որ հեղինակային նորաբանությունների իմաստագործաբանական ներուժի պահպանման և հայ ընթերցողին փոխանցման առավել բարձր արդյունավետությունը ապահովում է պատճենում թարգմանական մեթոդը:

Ֆենթրզի ժանրի թարգմանությունը մեծ մարտահրավեր է թարգմանչի համար՝ հաշվի առնելով առաջին հերթին ժանրին բնորոշ տարրերի՝ հեղինակային նորաբանությունների թարգմանական առանձնահատկությունները: Չնայած թարգմանաբանական գրականությունն առաջարկում է համարժեքության հասնելու մեթոդների և ռազմավարությունների մեծ բազմազանություն, թարգմանիչը գրեթե

միշտ բախվում է այս տարրերի գործաբանական ներուժի պահպանման և փոխանցման խնդրին: Ջ. Ռոուլինգի վիպաշարում իրականությունը կառուցված է հենց հեղինակային նորաբանությունների միջոցով, որոնց թարգմանությունը պահանջում է հեղինակի նպատակի մանրակրկիտ զննություն և մեկնություն:

Լեզվաբանական գրականության մեջ «նորաբանություն» եզրույթը խնդրահարույց է և վիճելի, և մի շարք տեսաբաններ նախընտրում են տարբերակել նոր բառ, նորաբանություն և «մեկանգամյա օգտագործման բառ» հասկացությունները: «Նոր բառ» է համարվում սովորաբար ցանկացած նորաստեղծ բառ, մինչդեռ «նորաբանություն» եզրույթն օգտագործվում է այն դեպքում, եթե այդ նորաստեղծ բառերը դառնում են լեզվի բառապաշարի մասը (Dressler 1993:5028): Ջ. Գրինը սահմանում է «մեկանգամյա օգտագործման բառերը» որպես «մեկանգամյա օգտագործման հորինվածքներ, որոնք նոր ստեղծվելիս, կարծես, հակված էին ընդհանուր բառապաշար ներմուծվել, սակայն շուտով անհետացան, կորսվեցին լեզվաբանական անցողիկության մեջ» (Green 1991: vii): Ռ. Ֆիշերն ամփոփում է եզրույթաբանության այս տարանջատումները՝ սահմանելով նորաբանությունը որպես «բառ, որը կորցրել է մեկանգամյա օգտագործման բառի իր կարգավիճակը, սակայն լեզվական համայնքի մեծամասնության կողմից դեռ նոր է համարվում» (Fischer 1998: 3):

«Մեկանգամյա օգտագործման բառերի» կարգին կարելի է դասել նաև այսպես կոչված անհատ հեղինակների կողմից ստեղծվող նորաբանությունները: Վերջիններս ստեղծվում են կոնկրետ հեղինակների կողմից, ծնվում և հիմնականում մահանում են որևէ ստեղծագործության մեջ և ծառայում են հեղինակի հաղորդակցական որոշակի նպատակի: Իհարկե, երբեմն, ընդ որում՝ հազվադեպ, հեղինակային նորաբանությունները ևս կարող են արմատանալ լեզվում՝ դուրս գալով տվյալ ստեղծագործության սահմաններից և դառնալով տվյալ լեզվի բառապաշարի տարրը:

Է. Աղայանը տարբերակում է ընդհանրացող և մեկուսացած նորաբանությունները, որտեղ հեղինակային նորաբանությունները համարվում են մեկուսացված: «Ընդհանրացող նորաբանություններ են այն բոլոր նոր բառերը, որոնք կարճատև կամ երկար ժամանակամիջոցում, անընդհատ կրկնվող գործածությունների հետևանքով անցնում են բառապաշարի գործուն շերտին և հենց դրանով էլ դադարում են նորաբանություն լինելուց... Մեկուսացած նորաբանություններ են այն բոլոր բառերը, որոնք գործածվում են այս կամ այն գրվածքում, բայց կրկնվող գործածություններ չեն ունենում,

հետևաբար և՛ չեն ընդհանրանում ու չեն անցնում բառապաշարի գործուն շերտին» (Աղայան 1984: 170-171):

Հեղինակային նորաբանությունները ֆենթրզի ժանրի բացառիկ ստեղծագործություններից՝ «Հարրի Փոթերը» վիպաշարի հիմնաքարերն են: Վիպաշարի բոլոր հատորներում, այդ թվում՝ խնդրո առարկա «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» հատորում իրադարձությունները զարգանում են հորինված վայրերում, հորինված կերպարների շուրջ և հորինված իրերի, առարկաների, կախարդանքների համատեքստում: Հեղինակային նորաբանությունները այստեղ իրենց անվանական և նշանակման գործառույթից զատ՝ իրականացնում են մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր գործառույթ, այն է՝ ընթերցողի մոտ առաջացնել հենց այն ճշգրիտ պատկերացումները, որոնք մտադիր է հաղորդել հեղինակը: Հեղինակային հորինվածքները, ուստի, որոշակի գործաբանական ներուժով են հագեցած, որի պահպանումն ու փոխանցումն էլ ամենամեծ մարտահրավերն է թարգմանչի համար:

Սույն հոդվածը գործ ունի «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» ստեղծագործության հեղինակային նորաբանությունների մի խմբի՝ տեղանուններ անվանող նորաբանությունների ուսումնասիրության հետ: Հետազոտության հիմքում վեպի՝ Ա. Ջիվանյանի թարգմանությունն է, ուսումնասիրվում են վերհանված հեղինակային նորաբանություն տեղանունների առաջարկվող թարգմանական տարբերակները, դրանց միջոցով՝ վերջիններիս գործաբանական արժեքի պահպանման և փոխանցման խնդիրները և թարգմանական եղանակներն ու միջոցները, որոնք ընկած են այս տարրերի թարգմանության հիմքում: Մասնավորապես՝ դիտարկվում են վեպից դուրս բերված տասը հեղինակային նորաբանություն տեղանուններ, որոնց թարգմանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը ծավալվում է մի կողմից՝ Ժ.Պ. Վինեի և Ժ. Դարբելնեի, և մյուս կողմից՝ Փ. Նյումարքի թարգմանության մեթոդների և ընթացակարգերի դասակարգումների շուրջ, քանի որ թարգմանության հիմքում ընկած մեթոդների և միջոցների բազմազանության պայմաններում անհնար է սահմանափակվել միայն մեկ տեսաբանի կողմից առաջարկվող թարգմանական մեթոդների և հնարների խմբերով:

Ժ. Պ. Վինեն ու Ժ. Դարբելնեն առաջ են քաշում թարգմանության ուղիղ (direct) և անուղղակի (oblique) մեթոդները (2004: 84-85): Ուղիղ մեթոդներ են համարվում *փոխառությունը (borrowing)*, *պատճենումը (calque)* (*բառային և կառուցվածքային*) և *բառացի (literal)* թարգմանությունը, իսկ անուղղակի մեթոդներն են *փոխադրումը*

(*transposition*), մոդուլյացիան (*modulation*), համարժեքությունն (*equivalence*) ու հարմարեցումը (*adaptation*):

Փ. Նյումարքը առաջարկում է թարգմանության հետևյալ ընթացակարգերը՝ փոխանցում (*transference*), բնականացում (*naturalization*), մշակութային համարժեք (*cultural equivalent*), գործառնության համարժեք (*functional equivalent*), նկարագրական համարժեք (*descriptive equivalent*), հոմանշություն (*synonymy*), պարզեցում (*through-translation*), տեղաշարժ (*transposition*), մոդուլյացիա (*modulation*), ընդունված թարգմանություն (*recognized translation*), թարգմանական պիտակ (*translation label*), փոխհատուցում (*compensation*), բաղադրիչային վերլուծություն (*componential analysis*), կրճատում և ընդլայնում (*reduction and expansion*), վերածակերպում (*paraphrase*), համադրում (*couplet*), նշումներ (*notes*) (1988: 81-91):

Ինչպես կարելի է նկատել վերոնշյալ դասակարգումներից, տեսաբանների առաջարկած թարգմանական մեթոդների և ընթացակարգերի մեջ կան համընկնումներ: Մասնավորապես՝ նույնական են փոխառության մեթոդն ու փոխանցման ընթացակարգը, համարժեքության մեթոդն ու մշակութային համարժեք ընթացակարգը, ինչպես նաև համանուն պատճենման և մոդուլյացիայի մեթոդներն ու ընթացակարգերը:

Ուսումնասիրված նորաբանությամբ արտահայտված տեղանունները «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» ստեղծագործությունում պատկանում են հետևյալ հիմնական ենթակարգերին՝ ա. բնակավայր, բ. փողոցներ, գ. կրթական հաստատություններ, դ. պանդոկներ, ե. վաճառատներ և բանկեր:

Առաջին՝ «բնակավայր» ենթախմբում դիտարկվում է **Godric's Hollow** տեղանունը:

“*What they're saying', she pressed on, 'is that last night Voldemort turned up in Godric's Hollow. He went to find the Potters.* ” (PS 2014: 12)

«–Ըստ լուրերի, –հատ-հատ ասաց պրոֆեսոր ՄաքԳոնագոլը, – երեկ գիշեր Վոլդեմորը հայտնվել է **Գոդրիքի Հովտում**: Գնացել էր Փոթերներին փնտրելու: » (ՓՔ 2018: 22)

Չնայած այն փաստին, որ **Godric's Hollow** կապակցության մեջ կիրառված առանձին բառային միավորները հեղինակի հորինվածք չեն, այս տեղանունը նորաբանություն է, քանի որ անվանում է մի վայր, որը մտացածին է, իրականում գոյություն չունի և հեղինակի երևակայության արդյունքն է: Սա այն վայրն է, որտեղ ապրում էին Հարրի Փոթերի ծնողները, որտեղ էլ հենց Վոլդեմորը գտնում և սպանում է նրանց, իսկ փոքրիկ Հարրիին թողնում՝ ճակատին սպիով: **Գոդրիքի Հովտը** իր

անունը ստացել է Գոդրիք Գրիֆինդորից՝ Հոգվորթսի հիմնադիրներից մեկից. այն վերջինիս ծննդավայրն է եղել: Տեղանուն նորաբանության թարգմանության մեջ դիտարկվում է Վինեյի և Դարբելների ուղիղ թարգմանության մեթոդներից պատճենումը, մասնավորապես՝ բառային պատճենում, քանի որ պահպանված է թիրախ լեզվի քերականական կառույցը: Պատճենման արդյունքում նորաբանության գործաբանական արժեքը թիրախ լեզու փոխանցված է:

Երկրորդ՝ «փողոցներ» ենթախմբում **Privet Drive, Diagon Alley** փողոցների անվանումներն են:

“Mr. and Mrs. Dursley, of number four, **Privet Drive**, were proud to say that they were perfectly normal, thank you very much”. (PS 2014: 1)

«**Ձիթենիների փողոցի** համար չորս տանն ապրող տեր և տիկին Դրալիները հպարտությամբ ասում էին, որ իրենք խելքները գլխներին մարդիկ են:» (ՓՔ 2018: 11)

**Privet Drive** փողոցում տխրահոջակ Դրալինների՝ Հարրի Փոթերին որդեգրած ընտանիքի տունն է: **Privet Drive** անվանումը հեղինակային նորաբանություն է, քանի որ անվանում է փողոց, որը գոյություն չունի իրականում, այլ պարզապես հեղինակաստեղծ ֆենթեզի աշխարհի տարրն է: **Privet՝ կիպրոս (սրնգենի)** թուփը (լատիներեն՝ «Ligustrum vulgare») ձիթենազգիների ընտանիքից է: Դրալինների տան փողոցի այս անվանման ընտրությունը Ջ. Բոուլինգի կողմից պատահականություն չէ: Ինչպես հեղինակը ինքն է մեկնաբանում, նա օգտագործել է արվարձաններում աճող այս թփի անվանումը, որը որպես կոկիկ ցանկապատ է ծառայում շատ անգլիական տների այգիների համար, քանի որ վերջինս ասոցացիա է առաջացնում մի կողմից ծայրամասային բնակավայրի հետ, և մյուս կողմից՝ ինչ-որ կերպ պատսպարող, մեկուսացնող դեր ունի: Իր հերթին այս անվանման նպատակն է ցույց տալ, որ Դրալիները պատսպարվել և մեկուսացել էին կախարդական աշխարհից՝ ցանկանալով ապրել իրենց հանդարտ, մազլներին<sup>1</sup> բնորոշ կյանքով (wizardingworld.com): Հայերեն թարգմանվածքում **Privet Drive**-ը թարգմանվել է որպես **Ձիթենիների փողոց**, որից կարելի է եզրակացնել, որ թարգմանության հիմքում ընկած են միաժամանակ երկու թարգմանական մեթոդներ. ըստ Վինեյի և Դարբելների դասակարգման՝ ընդհանուր առմամբ թարգմանության մեջ օգտագործված է հարմարեցման մեթոդը, քանի որ **Privet** բառը թարգմանվել է որպես

<sup>1</sup> Մագլ (անգլ.՝ muggle) – հեղինակային նորաբանություն, որը «Հարրի Փոթերը» վիպաշարում նշանակում է սովորական մարդ, ով զուրկ է կախարդական ունակություններից

**Ձիթենիների**, ինչից կարելի է ենթադրել, որ թարգմանությունը հարմարեցված է հայ ընթերցողին, որը, միգուցե ծանոթ չէ կիպրոս (սրնգենի) թփին, բայց, անշուշտ, ավելի հեշտությամբ կընկալի **Ձիթենիների** թարգմանական տարբերակը, իսկ **Drive**-ը փոխարինված է **փողոց** բառով, որը կարելի է պայմանավորել այն փաստով, որ հայերենում փողոցների անունները սովորաբար կրում են այս կաղապարը: Մյուս կողմից **Privet** բառի թարգմանության մեջ կիրառված է Փ. Նյումարքի տեղաշարժ թարգմանական ընթացակարգը, քանի որ եզակի թվի փոխարեն հայերենում օգտագործվել է հոգնակի թիվ՝ **Ձիթենիների**: Տվյալ նորաբանության իմաստագործաբանական ներուժը, թերևս, չնայած ամբողջովին կորսված չէ, սակայն հարմարեցում մեթոդի կիրառման արդյունքում մասնակիորեն է փոխանցվել թիրախ լեզու:

Այս ենթախմբում դիտարկվում է նաև **Diagon Alley** փողոցի անվանումը:

*“Welcome,” said Hagrid, ‘to **Diagon Alley**’*

*He grinned at Harry’s amazement. They stepped through the archway. Harry looked quickly over his shoulder and saw the archway shrink instantly back into solid wall”.* (PS 2014: 76)

« – Բարի գալուստ **Շեղածիգ նրբանցք**, – ասաց Հագրիդը:

– Նա ժպտաց՝ տեսնելով Հարրիի շփոթմունքը:

*Հեղոր երկուսով անցան կամարի տակով: Հարրին հասցրեց ուսի վրայով հեղ նայել ու տեսավ, թե ինչպես կամարն իրենց հետևից արագ փակվեց ու կրկին հոծ պատ դարձավ:»* (ՓՔ 2018: 82)

Փոթերյան հորինված իրականությունում **Diagon Alley** անունն է կրում լոնդոնյան գլխավոր փողոցներից մեկը: **Diagon** բաղադրիչը լատինական ծագում ունի և նշանակում է «շեղակի, անկյունային գիծ» (worldofdictionary.com): Փողոցի նման անվանմամբ, հավանաբար, հեղինակը նկատի է ունեցել, որ այստեղ շեղակի անցում է կատարվում մեկ իրականությունից բոլորովին այլ իրականություն, որը անտեսանելի է սովորական մագլներին: Ուստի, վերջինս ռոուլինգյան իմաստային պատճառաբանվածությամբ կազմված հերթական նորաբանությունն է: Հայերեն թարգմանության մեջ կիրառված է պատճենում, որը բավականին արդյունավետ կերպով թիրախ լեզվի ընթերցողին է փոխանցում նորաբանության իմաստագործաբանական ներուժը:

Որպես առաջնայնորեն դեռահասներին և պատանիներին ուղղված գրական ստեղծագործություն՝ «Հարրի Փոթերն» աչքի է ընկնում տարատեսակ դպրոցների, կրթական հաստատությունների, բաժինների, ուսումնառության հետ կապված վայրերի և դրանց անվանումների

առատությամբ: «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» հատորում հանդիպում ենք **Smeltings** և **Hogwarts** անվանումներին:

“Dudley had a place at Uncle Vernon’s old school, **Smeltings**”. (PS 2014: 34)

«Դադլին ընդունվել էր **Սմելտինգս**՝ քեռի Վեռնոնի հաճախած մասնավոր դպրոցը:» (ՓՔ 2018: 41)

Դադլի Դըրզլին հաճախում էր **Smeltings** կամ **Smeltings Academy** անվանումը կրող դպրոցը, որի շրջանավարտներից է եղել նաև վերջինիս հայրը: **Smeltings** միավորը նորաբանություն է, քանի որ հղում է անում Ջ. Ռոուլինգի մտացածին աշխարհի հորինվածք հանդիսացող նշանակյալի, թեև նշանակիչն այս դեպքում ամենևին էլ նորոյթ չէ: **Smelting** բառը վերաբերում է մետաղի գտման գործընթացին (Ասմանգույան 2004: 887): Բառի իմաստային բեռնվածությունն ու գործաբանական արժեքը հուշում են, որ դպրոցն ունի արհեստագործական ուղղվածություն: Թարգմանության մեջ օգտագործված է փոխանցման հնարներից տառադարձությունը, ինչի արդյունքում իմաստային պատճառաբանվածությունը՝ «smelting» բառի գործաբանական արժեքը, թիրախ լեզու չի փոխանցվել:

Մագլների այս սովորական դպրոցին է հակադրվում Հոգվորթսը՝ իր ողջ շքեղությամբ ու ճոխությամբ

“Call me Hagrid”, he said, ‘everyone does. An’ like I told yeh, I’m Keeper of Keys at **Hogwarts** – yeh’ll know all about Hogwarts, o’course.”. (PS 2014: 53)

« – Ինձ Հագրիդ կոչիր, – ասաց նա, – բոլորն են ինձ այդպես անվանում: Հոգվորթսի բանալիների պահապանն եմ: Դու երևի **Հոգվորթսի** մասին ամեն ինչ գիտես» (ՓՔ 2018: 59)

Ջ. Ռոուլինգը պատկերացրել էր Հոգվորթսը՝ որպես «մի վայր, որտեղ մեծ կարգուկանոն է տիրում, բայց շատ վտանգավոր է, որտեղ երեխաները այնպիսի կարողություններ ունեն, որոնցով կարող են ճնշել իրենց ուսուցիչներին» (accio-quote.org): Ռոուլինգյան նորաբանությունների շարքում **Hogwarts**-ը թերևս ամենախնդրահարույց ծագումնաբանությունն ունի: Այստեղ կարող ենք միայն ենթադրել, որ բառը բառաբարդման արդյունքում է ծնվել և տրոհվում է **hog** և **wart** արմատների, որոնք համապատասխանաբար նշանակում են **խոզ** (Ասմանգույան 2004: 447) և **գորպնուկ** (Ասմանգույան 2004: 1076): Իմաստային պատճառաբանվածությունը այս նորաբանության դեպքում, այնուամենայնիվ չի հաջողվում բացահայտել: Վերջինս հայերեն է թարգմանվել հնչյունադարձության միջոցով:



Տեղանուն նորաբանությունների հաջորդ ենթախումբը պանդոկների անվանումներն են:

*“This is it,’ said Hagrid, coming to a halt, ‘the **Leaky Cauldron**. It’s a famous place.”* (PS 2014: 73)

« – Հասանք, – վերջապես կանգ առավ Հագրիդը, – «**Ծակ պղինձ**» այստեղ է. Նշանավոր վայր է:» (ՓՔ 2018: 78)

**Leaky Cauldron**-ը Լոնդոնում գտնվող հորինված պանդոկ-հյուրանոց է կախարդների համար: **Cauldron** բառը նշանակում է «կաթսա», և պանդոկի անվանումը կապված է դրա ինտերիերի կարևորագույն մասնիկի՝ հսկայական կաթսայի հետ: **Leaky Cauldron** նորաբանությամբ Զ. Ռոուլինգը ընթերցողին պանդոկային տրամադրություն է հաղորդում: Այն հղում է անում հնամաշ մի վայրի, որտեղ հիմնականում հավաքվում են հարբելու: Ինչ վերաբերում է նորաբանության թարգմանությանը, ապա այստեղ ակնհայտորեն օգտագործված է պատճենման ընթացակարգը, քանի որ բառակապակցության բաղադրիչները նույնությամբ պատճենված են թիրախ լեզու: Ընդ որում, պետք է նշել, որ **պղինձ** բառը ունի ոչ միայն «կարմրավուն կռելի մետաղ» իմաստը, այլև նշանակում է «այդ մետաղից պատրաստված կաթսա» (bararanonline.com), ուստի միանգամայն տրամաբանական և իմաստագործաբանական արժեքի փոխանցման տեսանկյունից լիովին պատշաճ է նորաբանության թարգմանությունը պատճենման միջոցով:

«Պանդոկներ» ենթախմբում դիտարվում է նաև **Hog’s Head** նորաբանությունը:

*“It’s not that unusual, yeh get a lot o’funny folk in the **Hog’s Head** – that’s one of the pubs down in the village”.* (PS 2014: 285)

«– Այստեղ տարօրինակ բան չկա. «**հոգի գլուխ**» ինչ տեսակ մարդ ասես, գալիս է... Գյուղի պանդոկներից մեկն է այդպես կոչվում: » (ՓՔ 2018: 286)

**Leaky Cauldron** պանդոկը կախարդների հորինված աշխարհի միակ պանդոկը չէ: **Hog’s Head** անունով այս վայրը, այնուամենայնիվ, փոքր-ինչ ավելի վատ համբավ ունի, և ինչպես Հագրիդն ինքն է նկարագրում, այստեղ ինչ տեսակ մարդ ասես գալիս է: Պանդոկի անունը վիպաշարի առաջին հատորում պարզապես հիշատակված է, շատ մանրամասն տեղեկատվություն դրա մասին այստեղ չենք ստանում: Ավելի մանրամասն պանդոկը նկարագրվում է հաջորդ հատորներում. այստեղ պարզ է դառնում, որ պանդոկը համեմատաբար էժան, փոքր, կեղտոտ վայր է: Այն այնքան կեղտոտ է, որ հատակը գրեթե անտեսանելի է կեղտի տակ: Զարմանալի չէ, որ պանդոկի դռան վրա կախված է մի

մաշված փայտե ցուցանակ, որի վրա վայրի խոզի գլուխ է, որից արյունը ծորում է դրա շուրջը փաթաթված սպիտակ կտորի վրա (hp-lexicon.org): Այստեղից էլ պանդոկը ստանում է իր անունը՝ **Hog's Head** «խոզի գլուխ»: Նորաբանությունը հայերեն թարգմանվածքում փոխանցված է պատճենման ընթացակարգով: Դրա բաղադրիչները նույնությամբ պատճենված են թիրախ լեզու. կաղապարը պահպանված է: Հետևաբար, իմաստագործաբանական արժեքը պահպանված է թիրախ լեզվում:

Ֆենթըզի իրականությունը Հարրի Փոթերում գերծ չէ առք ու վաճառքի, ֆինանսական գործարքներից, որոնք բնորոշ են ոչ կախարդական, ամենասովորական իրականությանը: Տեղանուն նորաբանությունների «վաճառատներ և բանկեր» ենթակարգին են պատկանում **Flourish and Blotts**, **Eeylops Owl Emporium** և **Gringotts** հորինվածքները:

*“They bought Harry’s school books in a shop called **Flourish and Blotts** where the shelves were stacked to the ceiling with books as large as paving stones bound in leather; books the size of postage stamps in covers of silk; books full of peculiar symbols and a few books with nothing in them at all”.* (PS 2014: 86)

«Հարրիի դասագրքերը գնեցին «**Ֆլորիշ և Բլոթս**» գրախանութից: Դարակներին դիզած գրքերը մինչև առաստաղ էին հասնում: Կային հսկա սալաքարերի չափ կաշեկազմ գրքեր և դրոշմանիշների մեծության մեղաքսակազմ հատորյակներ. գրքեր, որոնց էջերին զարմանալի տառեր էին գրված, և դատարկ էջերով գրքեր:» (ՓՔ 2018: 92)

Իմաստային պատճառաբանվածության տեսանկյունից աչքի է ընկնում նաև **Flourish and Blotts** գրախանութի անունը, որը գտնվում է Շեղաձիգ նրբանցքում և որտեղից Հոգվորթսի սաները կարող են գնել իրենց ուսումնառության համար անհրաժեշտ տարատեսակ դասագրքերը: Իմաստային զուգորդումն այս դեպքում արտահայտվում է դրա երկու բաղադրիչների միջոցով միաժամանակ: **Flourish** բառը բազմիմաստ է, և դրա նշանակությունների շարքում գիր բառի իմաստային դաշտում կարելի է առանձնացնել «պարուրազարդ (ձեռագրի մեջ)» (Ասմանգույան 2004: 357) իմաստը, իսկ **Blot** բառը, իր հերթին, նշանակում է «թանաքի կաթիլ» (Ասմանգույան 2004: 101): Անգլալեզու ընթերցողի դեպքում, հետևաբար, **Flourish and Blotts** նորաբանությունը համապատասխան զուգորդումներն է արթնացնում դրա նշանակյալի հետ: Հայերեն թարգմանության մեջ, այնուամենայնիվ, անվանումը հնչյունադարձման միջոցով է փոխանցված՝ **Ֆլորիշ և Բլոթս**, ինչից բխում է, որ թիրախ լեզվի ընթերցողի դեպքում չի կարող լինել համարժեք ազդեցությունը, ինչը հեղինակն է փորձել գործել բնագիր տեքստի

լեզվամշակույթը կրող ընթերցողների շրջանում՝ շեշտելով գիրը որպես ուսումնական գործընթացի խորհրդանիշ:

Ենթախմբի հաջորդ նորաբանությունը **Eeylops Owl Emporium** անվանումն է:

“Twenty minutes later, they left **Eeylops Owl Emporium**, which had been dark and full of rustling and flickering, jewel-bright eyes”. (PS 2014: 87)

«Քսան ըրպե անց նրանք դուրս եկան **բվերի վաճառարնից**, որը մութ վայր էր. Ամենուր շրշուններ էին, թևերի թփթփոց ու ակնեղենի պես փայլփլուն աչքեր:» (ՓՔ 2018: 93)

Շեղածիզ նրբանցքում գտնվող **Eeylops Owl Emporium** անունն է կրում բվեր վաճառող խանութը, որտեղից Հագրիդը բու է գնում Հարրիի համար: Որպես նորաբանություն՝ անվանումը հետաքրքրական է թե՛ կազմության և թե՛ թարգմանության տեսանկյունից: **Eeylops** բառի ծագումնաբանությունը խնդրահարույց է, քանի որ անհնար է միանշանակ պնդել՝ արդյո՞ք այն լիովին հորինված, նոր հնչյունակազմով նորաբանություն է, թե հեղինակն այն ստեղծել է արդեն առկա միավորներից: Այնուամենայնիվ, թեև հնարավոր է որոշակի կապ հայտնաբերել **lop** բառի և տվյալ վայրի միջև՝ **Eey** հնչյունների կապակցությունը անգլերենում որևէ իմաստ չի արտահայտում: Ինչ վերաբերում է **lop** բառին, նրա՝ «ճյուղեր, ոստափայտ» (Ամանգուլյան 2004: 558) նշանակությունն զուգորդվում է խանութի ցուցատախտակի հետ, որի վրա ճյուղին նստած բու է պատկերված: Կա ենթադրություն, որ հենց այս կապակցությամբ է Ջ. Ռոուլինգը կազմել նորաբանությունը:

Թարգմանության մեջ **Eeylops** բաղադրիչին համապատասխան թարգմանական բաղադրիչ չի առաջարկվել, ուստի կարող ենք պնդել, որ այստեղ կիրառված է կրճատում թարգմանական ընթացակարգը (Փ. Նյումարք):

Քննարկվող ենթախմբում որպես բանկի անվանում է հանդես գալիս **Gringotts** նորաբանությունը:

“They didn’t keep their gold in the house, boy! Nah, first step fer us is **Gringotts**. Wizard’s Bank”. (PS 2014: 68)


« – Տղա՛, ոսկին հո տանը չէին պահում: Ուրեմն նախ **Գրինգոթս** ենք գնում՝ կախարդների բանկ: » (ՓՔ 2018: 73)

**Gringotts** անունն է կրում կախարդների համար նախատեսված բանկը, որում էլ պահվում են այն միջոցները, որ Հարրիի ծնողներին էին պատկանում, և որոնց մասին Հարրին չէր էլ կարող երազել մինչ Հագրիդի հետ բախտաբեր իր հանդիպումը: **Gringotts** բառը ևս հեղինակային նորաբանություն է, որը հնչողությամբ բավականին նման է

**Hogwarts**-ին: Զ. Ռոուլինգը իր հարցազրույցներից մեկի ժամանակ պարզաբանում է, որ ստացել է անվանումը **Ignots** բառից, որը *ոսկու ձուլակտոր* նշանակությունն ունի: Պատճառն այն է, որ մի կողմից նա հավանել է բառի հնչողությունը, իսկ մյուս կողմից այն ոսկի է մատնանշում: **Ignots** բառին նա նաև հավելել է **gr** նախադիր մասնիկը, որը, ըստ իրեն, որոշակի ազդեցիվ հնչողություն և վախեցնող ազդեցություն ունի ընթերցողի վրա: Հենց այսպես էլ ստացվել է **Gringotts** նորաբանությունը ([accio-quote.org](http://accio-quote.org)): Նորաբանությունը հայերեն թարգմանված է հնչյունադարձության միջոցով, ուստի գործաբանական տեսանկյունից վերջինս հայ ընթերցողի մոտ չի կարող առաջացնել միևնույն զուգորդումները:

«Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպում, այսպիսով, հեղինակային նորաբանությունների մի շարք իմաստային խմբերի շարքում, ինչպես օրինակ՝ կերպարների անուններ, առարկաներ, կախարդանքներ և այլն, կարելի է վերհանել նորաբանությամբ արտահայտված տեղանունները, այդ թվում՝ դպրոցների, պանդոկների, բանկերի և այլ անվանումներ: Վեպից վերհանված և հեղինակային նորաբանություն գրեթե բոլոր տասը տեղանունների կազմության վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել հեղինակի նպատակը, նորաբանության մեջ ներդրված գործաբանական բեռնվածությունը և ընթերցողին փոխանցվող հաղորդագրությունը: Իմաստային պատճառաբանվածությունն անհնար է եղել դուրս բերել միայն մեկ հեղինակային նորաբանության դեպքում, որի կազմությունը, սակայն, ևս հիմնված է լեզվում գոյություն ունեցող բառային միավորների համադրման վրա: Ինչպես ցուցադրված է Պատկեր 1-ում, հեղինակային այս նորաբանությունների թարգմանության մեջ կիրառվել են պատճենում (40 %), փոխանցում (հնչյունադարձություն և տառադարձություն) (40%), կրճատում (10%), համակցված (հարմարեցում, տեղաշարժ) (10 %) թարգմանական մեթոդները:

## Պատկեր 1



Աղյուսակ 1

Ենթակարգ	Նորաբանությունը	Թարգմանությունը	Թարգմանության մեջ կիրառված մեթոդը կամ ընթ.-ը	Գործ. արժեքի պահպանումը հայերենում
Բնակավ.	Godric's Hollow	Գոդրիքի Հովիտ	Պատճենում	+
Փողոցներ	Privet Drive	Ձիթենիների փողոց	Համադրում (Հարմարեցում, Տեղաշարժ)	+/-
	Diagon Alley	Շեղածիզ նրբանցք	Պատճենում	+
Պանդոկներ	Leaky Cauldron	Ծակ պղինձ	Պատճենում	+
	Hog's Head	Խոզի գլուխ	Պատճենում	+
Կրթ. հաստատություններ	Smeltings	Սմելտինգս	Փոխանցում	-

	Hogwarts	Հոգվորթս	Փոխանցում	-
Վաճառատներ և բանկեր	Flourish and Blots	Ֆլորիշ և Բլոթս	Փոխանցում	-
	Eeylops Owl Emporium	Բվերի վաճառատուն	Կրճատում	+/-
	Gringotts	Գրինգոթս	Փոխանցում	-

Նորաբանությունների իմաստային ենթակարգերի թարգմանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ «բնակավայր» և «փողոցներ» անվանող նորաբանությունները հիմնականում թարգմանվել են պատճենման միջոցով, բացառությամբ՝ մեկ նորաբանության, որի թարգմանության մեջ համադրված են երկու թարգմանական մեթոդներ: Պատճենման միջոցով են թարգմանված նաև «պանդոկներ» ենթախմբի նորաբանությունները: «Կրթական հաստատություններ» ու «վաճառատներ և բանկեր» ենթախմբերի նորաբանությունները հիմնականում թարգմանված են հնչյունադարձության և տառադարձության միջոցով՝ բացառությամբ «Eeylops Owl Emporium» նորաբանության, որը թարգմանվել է կրճատման միջոցով (տե՛ս Աղյուսակ 1): Կարելի է եզրակացնել, որ հեղինակային նորաբանությունների իմաստագործաբանական ներուժի պահպանման և հայ ընթերցողին փոխանցման առավել բարձր արդյունավետությունը ապահովում է թարգմանության հենց պատճենման մեթոդը, որտեղ թեև չի պահպանվում նորաբանության հնչյունային կազմն ու յուրօրինակ հնչողականությունը, տեղի է ունենում իմաստային լիակատար վերապատկերում՝ թիրախ լեզվում: Նման վերապատկերում է տեղի ունեցել «բնակավայր», «փողոցներ» և «պանդոկներ» ենթակարգերի նորաբանությունների թարգմանության արդյունքում, մինչդեռ «կրթական հաստատություններ» ու «վաճառատներ և բանկեր» ենթակարգերի

նորաբանությունների թարգմանության արդյունքում նորաբանությունների գործաբանական ներուժը թիրախ լեզվում պահպանված չէ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, 372 էջ. Aghayan E., Y'ndhanowr & haykakan bar'agitowt'yown, Er&an, 1984, 372 e'j
2. Ասմանգուլյան Հ., Հովհաննիսյան Մ., խմբ., Անգլերեն-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2004, 1144 էջ. Asmangowlyan H., Hovhannisyan M. xmb., Angleren-hayeren bar'aran, Er&an, «Hayastan» hratarakchownt'yown, 2004, 1144 e'j
3. Ռուսլինգ Զ.Ք., Հարրի Փոթերը և Փիլիսոփայական քարը, թարգմ. Ալ. Զիվանյան, Երևան, «Զանգակ» հրատ., 2018, 336 էջ. R'owling J.Q., Harri P'ot'ery' & P'ilisop'ayakan qary', t'argm. Al. Jivanyan, Er&an, «Zangak» hrat., 2018, 336 e'j
4. Dressler W. U., Word-formation: Poetic licence. In Ronald E. Asher & James M. Y. Simpson (eds.), The encyclopedia of language and linguistics, Vol. 9, Oxford:Pergamon Press, 1993, pp. 5028–5029
5. Fischer R., Lexical change in Present-day English. A corpus-based study of the motivation, institutionalization, and productivity of creative neologisms. Tubingen: Gunter Narr Verlag, 1998, 196 p.
6. Green J., Neologisms. New words since 1960, London: Bloomsbury Publishing, 1991
7. Newmark P., A Textbook of Translation, Shanghai: Shanghai Foreign Language Education Press, 1988, 292 p.
8. Rowling J.K., Harry Potter and the Philosophers Stone, Bloomsburry, 2014, 342 p
9. Vinay J.P., Darbelnet J., A Methodology for Translation, Trans. Juan C.Sager, M.-J.Hamel in L. Venuti (ed), The Translation Studies Reader, New York: Routledge, 2004, pp. 84-94
10. <http://www.accio-quote.org/themes/hogwarts.htm>, last retrieved 12.05.2021
11. Coad, Emma. One-on-one interview with J.K. Rowling, *ITV*, 17 July 2005, available online at [<http://www.accio-quote.org/articles/2005/0705-itv-coad.htm>], last retrieved 03.05.2021

## INTERNET SOURCES

12. <https://www.hp-lexicon.org/place/great-britain-united-kingdom/scotland/hogsmeade/hogs-head/>, last retrieved 05.05.2021
13. <https://www.wizardingworld.com/writing-by-jk-rowling/number-four-privet-drive>, last retrieved 07.05.2021
14. <https://bararanonline.com/%D5%BA%D5%B2%D5%AB%D5%B6%D5%B1>, last retrieved 04.05.2021
15. <https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/neologism?q=neologism>, last retrieved 10.05.2021
16. <https://worldofdictionary.com/dict/latin-english/meaning/diagon>, last retrieved 04.05.2021

### **АННА ШАХБАЗЯН - ПРОБЛЕМА СОХРАНЕНИЯ ПРАГМАТИЧЕСКОГО ЗНАЧЕНИЯ АВТОРСКИХ НЕОЛОГИЗМОВ-ТОПОНИМОВ В АРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ РОМАНА ДЖ. РОУЛИНГ “ГАРРИ ПОТТЕР И ФИЛОСОФСКИЙ КАМЕНЬ”**

*Ключевые слова:* авторский неологизм, жанр фэнтези, методы перевода, процедуры перевода, прагматическое значение

В романах «Гарри Поттер», кроме именованья, авторские неологизмы выполняют другую функцию - донести до читателя мысль и намерение автора и создать именно те представления, которые автор намеревался, что типично для произведений жанра фэнтези. Сохранение и передача этого прагматического значения авторских новообразований - настоящая задача для переводчика. Цель данной статьи - изучить семантико-прагматические особенности авторских неологизмов-топонимов в романе “Гарри Поттер и философский камень”, а также определить, каким методом или процедурой перевода они были переведены на армянский язык и в какой степени применение этого метода способствовало сохранению прагматического значения этих единиц в языке перевода. Исследование показывает, что калькирование как метод перевода обеспечивает более высокую эффективность сохранения и передачи армянскому читателю семантико-прагматического потенциала авторских неологизмов.



**ANNA SHAHBAZIAN - THE PROBLEM OF PRESERVATION OF THE PRAGMATIC VALUE OF AUTHOR'S TOPONYMIC NEOLOGISMS IN THE ARMENIAN TRANSLATION OF THE NOVEL "HARRY POTTER AND THE PHILOSOPHER'S STONE"**

*Keywords: author's neologism, fantasy genre, translation methods, translation procedures, pragmatic value*

In the "Harry Potter" series, as is typical of works of the fantasy genre, author's neologisms perform not only the function of signifying, but also the function of transferring the author's message and intention to the reader, creating the exact images that the author intended to convey. Preserving and conveying this pragmatic potential of author's creations is a real challenge for the translator. The aim of this article is to study the semantic-pragmatic peculiarities of author's toponymic neologisms in the novel "Harry Potter and the Philosopher's Stone", as well as to observe through what translation method or procedure the latter were translated into Armenian and to what extent the use of this tool contributed to the preservation of their pragmatic value in the target language. This research shows that the translation method of calque is the most effective in preserving the semantic-pragmatic potential of the author's neologisms and conveying it to the Armenian reader.

**Ներկայացվել է՝ 20.09.2021**

**Գրախոսվել է՝ 20.10.2021**

**Երաշխավորվել է ԲՊՀ Անգլերենի հաղորդակցման և**

**թարգմանության ամբիոնի կողմից՝ 31.11.2021**